

Գիշերային համերգ

Հայկական ռոքի պատմության ընթացքում եղել են դեպքեր, որոնք ջերմ հիշողություններ են թողել ականատեսների սրտերում: “MDP” խմբի գիշերային համերգը, որը տեղի է ունեցել 1993 թ. մայիսի 28-ին, կարելի է վստահ անվանել 90-ական թթ. հայկական “անդերգրաունդի” կարևոր իրադարձություններից մեկը: Իրենց հիշողությունների և տպավորությունների մասին են պատմում Վահագն Պապայանը /Jeff/ և Էդուարդ Աբրահամյանը /“MDP”-ի ստեղծահար/:



Վահագն Պապայան - 1993-ին MDP խումբն իր փորձերն անցկացնում էր Գյուղատնտեսական ինստիտուտում: Մենք այդ ժամանակ անցումային շրջանում էինք գտնվում: Արդեն լքել էր խումբը կիթառահար Սուշեղ Պետրոսյանը, մեկնելու վրա էր թմբկահար Հայկ Հովհաննիսյանը: Հին կազմը այլևս չկար, նորը դեռ չէր ձևավորվել: Չնայած դրան MDP-ի տղաները մեզ հրավիրեցին մասնակցելու մի զարմանալի համերգի, որի սկիզբը նշանակված էր գիշերը ժամը 12:00 -ին, իսկ վայրը հենց Գյուղինստիտուտի լսարաններից

մեկն էր (ամենամեծը 4-րդ հարկում): Որքանով հիշում եմ նրանք նոր էին ավարտել իրենց մոտավորապես «Usurper of the Sun ...» կոչվող ալբոմի ձայնագրությունը, և որպես պրեզենտացիոն համերգ ընտրվել էր այդ տարօրինակ տարբերակը:



Էդուարդ Աբրամյան – Тогда я работал в Сельскохозяйственном Институте электриком и в моём расположении была комнатка, а в Сельхозе был круглосуточный свет – не знаю по какой причине, но свет там не отключали. В те дни ужасно трудно было добираться домой после 10-и вечера, тем более в 3-й массив. Так что мы не только репетировали, но и жили в Сельхозе, приходили с продуктами на неделю и музицировали, сочиняли, в основном ночью. Уже была готова программа и надо было сыграть её на публике. Организовать концерт было проблематично – зал, аппаратура... - свет

могли вырубить в любое время, в любом зале. И тут нас осенило, а почему не здесь, ночью. Это была рискованная затея, но мы быстро поняли, что очень хотим этого и именно ночью.

Վ.Պ. Համերգը գաղտնի էր կազմակերպվում, և խնդիրներից մեկն էր ինստիտուտի պահակի անտեղյակության ապահովումը: Օդին ընտրվեց որպես ամենավստահելի միջոց և նշանակվեց պատասխանատու (MDP-ի հարվածող Հարութը): Չկային ոչ ազդագրեր, ոչ գովազդային պատահառներ, բանավոր հրավիրված էին ամենաթրծված և հավատարիմ ընկեր-բարեկամները: Կային խամրած երկնամոխրագույն հրավիրատոմսեր, որոնց վրա պատկերված էր Բոսֆի նկարների մեկից մի հատված, և ինչ-որ անկապ խորհուրդ էր գրված բուլկու թե բուբլիկի մասին արդեն չեմ հիշում: Ժամանած ժողովուրդը տեղավորվում էր հենց նստարանների շուրջ, մատուցվում էր լուծվող սուրճ և կարմիր գինի:

Յ.Ա. – Важно было сохранить секретность предприятия, поэтому на так называемых афишах был указан день и час, место указано не было, о нем знали только самые приближенные, которым и было доверено собирать народ у метро “Еритасардакан” и

небольшими группами, не более 10-и человек, приводит к месту события. Мы приготовили входные билеты на 50 человек, на которых был напечатан Босх, и написано *“Не делись бутербродом, если съел его сам получишь большее удовольствие”*. Имелось ввиду, что не надо особенно распространяться о концерте (из принципа всё той же конспирации), лучше приходите сами и наслаждайтесь во всю. Несмотря на это, пришло вдвое больше людей, чем мы рассчитывали. Продавал билеты Тигран Папян (известный тусовщик, ныне живущий в Израиле и работающий менеджером в музыкальном магазине Tower Records). На вырученные деньги купили вино и растворимый кофе. Девочки приготовили кофейный ликер и во время концерта шмыгали туда-сюда с напитками на подносах.

Честно говоря мы не очень верили, что концерт состоится, и в глубине души надеялись на провал, потому что могло быть действительно худо. И все таки где-то к 18.00 начали подготовку. Надо было незаметно поднять аппаратуру с первого этажа на четвертый, так чтобы на пути не наткнуться на уборщицу или еще кого-нибудь, оставшегося допоздна. Сторожа решили напоить так, чтобы он до начала концерта сам смылся, или уснул беспробудно, до утра. В конце концов он сдал нам ключи, оставив огромный корпус института в наше распоряжение, а сам ушел домой. Еще наши друзья специально по поводу концерта привезли “Промеус”, так называемый “мозг” для синтезатора, тогда очень модный. Я пробовал регистры, Армен (наш бассист) ставил звук, и в полночь, к огромному нашему удивлению народ стал собираться.

Վ.Պ. Առաջին սոսիալականությունը, որ մարդիկ ունենում էին շենք մտնելիս էդիկի (MDP-ի ստեղծահար) «Մոզգ»-ի ահեղ ձայնն էր, որ դեռ մինչև համերգի սկսվելն արդեն սարսափ էր ներշնչում: Այդ «Մոզգ»-ով, որ իբր սինթեզատորի հնարավորությունները անհամեմատ լայնացնում էր, տղերքը շատ էին հպարտանում և առատորեն օգտագործում էին այն: Այսօր դա առնվազն ծիծաղելի է, այնքան արագ են փոխվում սինթեզատորների մոդելներն ու պահանջները: Սակայն այն ժամանակ, երբ ամեն ինչ դիֆիցիտ էր, շատ ավել էր ձգտումը գոնե ձեռքի տակ եղածից ինչ-որ պիտանի բան ստանալ:

Յ.Ա. - Народ приходил изумительный, люди большинство которых я не видел никогда в жизни. Откуда их достал Папьяш, понятия не имею. Это сейчас можно легко встать и пойти в гости, или выйти куда-нибудь в двенадцать ночи, а тогда весь город был во тьме, нигде света нет. Еще свежа была память о комендантском часе, когда после 10-и вообще на улице никого быть не должно. Вдобавок ко всему, день концерта совпал с Днём Независимости, вокруг ходили фидайны с автоматами. А люди всё-таки пришли, с одной стороны интересно и экзотично, а с другой стороны страшно, потому что могли прийти и забрать, запросто, как в коммунистические времена - рок-концерт... ночью... когда в городе света нет...

Վ.Պ. Բացման խոսքով հանդես եկան հայտնի ռոք ակտիվիստներ՝ հրապարակախոս Տիգրան Պապյանը և հրատարակիչ Արման /Մարկ/ Պաղարյանը: Վերջինս մինչ այսօր ամեն հարմար և անհարմար առիթներով շարունակում է հիանալ իր ելույթում ցիտած արտահայտությամբ Ջեյմս Ջոյսի «Ուլիս» վեպից (ցիտատը չենք կրկնում պարկեշտության նորմերը չխախտելու համար):

Համերգը սկսվեց և «Մոզգ»-ն էլ ավելի հզոր համառությամբ ներթափանցեց մարդկանց հոգիները: Մեր թմբկահար Հայկը ջղաձգորեն բամբակ էր փնտրում, որ ականջները փակի, հետո բավարարվեց թղթի կտորներով, հիմնավորապես խցկեց ականջների մեջ, իսկ երբ իրենց ծրագրի առաջին մասը կատարելուց հետո MDP-ն մեզ բեմ հրավիրեց, բավական երկար ժամանակ չէր կարողանում դրանք հանել:

Յ.Ա. - Вообще странно, что о концерте никто так и не узнал. Несмотря на то, что мы повесили одеяла на окна, то есть конспирировались как могли, чуть опаздавшие говорили, что свет на последнем этаже заметен, а в ночной тишине уже с “Еритасардакан” слышна странная музыка. Так что грохот стоял приличный.

Վ.Պ. Մենք դուրս եկանք մեր արդեն գոյություն չունեցող հին կազմով: Մուշեղը հատուկ այս միջոցառման համար «շոտլանդական ժողովրդական երգ» էր գրել, ես բառերն էի հորինում հենց ելույթից առաջ: Մուշեղը հիմնական ձայնն էր երգում, ես երկրորդ, և դա միակ դեպքն է իմ կյանքում, երբ ստիպված եմ եղել բեմից երգել: Ասում են լավ հաճելի գրոտեսկանման ֆալշ էր: Հիմա անգամ մի նոտա չեմ հիշում այդ երգից: Երբ Արման Պաղարյանը իր թերթի համար ուզում էր անպայման նոր գործի անունն իմանալ, մենք շվարած իրար էինք նայում, բայց Մուշեղը իմարովիզացիայի վարպետ էր և անմիջապես հորինեց «Памяти Мюнстерского Короля»:

Ընդմիջումը փոքր ինչ ձգձգվեց, որովհետև չգիտեմ երբ և ինչպես բեմին հայտնվեցին նորանոր մասնակիցներ: Առավել վառ էր «Այաս» խմբի նախկին հարվածող Արմենի /Ռեմբո/ հայտնվելը հարվածային կոմպլեկտի ետևում, ինչից Հայկը շատ մտահոգ տեսք ընդունեց, մտածելով որ դա իր կոմպլեկտի վերջին համերգն է, ինչպես նաև MDP-ի տղաները, գուշակելով, որ նույնիսկ այդ համերգը կարող է չհասնել ավարտին: Եվ ահա այստեղ օգնության հասավ հովհարային անջատումը՝ լույսերը գնացին: Պետք է հիշեցնել, որ 1993 թվականն էր և մոմը, լապտերն ու լուցկին ազգային հանդերձանքի ատրիբուտներ էին: Մոմերի լույսի ներքո բեմ բարձրացան բոլոր մասնախմբի ինքնուստեղծագործողները, երգիչ-երգչուհիները, ակուստիկ կիթառահարները: Կատարվեցին բազմաթիվ սեփական և դասական զլուխգործոցներ: Դրան զուգահեռ մեկ այլ խումբ զանգում էր էներգետիկայի նախարարություն /ծանոթ ունեինք/: Արդեն չեմ հիշում դրա հետևանքով, թե դրանից անկախ, բայց լույսերը վերադարձան:

Յ.Ա. Кроме нас еще выступали группы: «Dumbarton Oaks», “Бруз”, “Аснем”. Запомнился Рэмбо пристававший ко всем девушкам подряд. “Бруз” выручили когда посреди ночи вырубил свет, чего в Сельхозе никогда не было. Они организовали что-то вроде «unplugged»-а, пели “Битлз” и тому подобное.

А Рэмбо, и еще кто-то из представительных пошли на переговоры в электросеть, сказали что те проваливают важное мероприятие – концерт посвященный Дню Независимости. Те были в недоумении, но все-же свет дали, правда пригрозив, что придут проверять что-за концерт и чья независимость...

Վ.Պ. MDP-ն հաջողությամբ հասցրեց համերգը ավարտին, վերջում բոլորին ապշեցնելով իրենց նոր գրած «River» հզոր ստեղծագործությամբ («Մոզզ»-ը փայլում էր իր ողջ էությանը): Լուսաբացին ժողովուրդը սկսեց ցրվել: Ոմանք քնեցին հենց ինստիտուտում պախկված, ոմանք մերձակա այգում: Մենք մերոնց մի մասի հետ գնացինք Կասկադ՝ արևածագ դիմավորելու:

Յ.Ա. Надо было все убрать до утра, и не только зал, а весь корпус, около часа не было света, мало-ли кто куда забрел, парочками или по одиночке.

Девочки должны были успеть все подмести, тут и добровольцы из публики остались помогать, причем абсолютно незнакомые.

Утром легли спать в нашей камерке, друг на друга, бесподобно уставшие и измученные, но впечатления остались грандиозные, потрясающие. Мы не додумались снять концерт на видео, даже фотки ни одной нет, до того невероятным нам это все казалось. Такой вот ночной концерт.

Վ.Պ. Այսօր հնարավոր է փոքր ինչ դժվար լինի պատկերացնել այդ կարգի միջոցառման վիթխարի իմաստն ու նշանակությունն այն ժամանակ, երբ երաժշտասերների ամեն մի խումբ հաշվարկում էր, թե ընկերներից ում մոտ որ ժամին կլինի այդ չարաբաստիկ էլեկտրականության 2 ժամը, որ կարոտած թմրադեղի պես մի հին ալբոմ «Led Zeppelin» լսեն, կամ ծանոթանան «Jethro Tull»-ի նոր ալբոմին: Սակայն, դեռ Երևանում մնացած սակավաթիվ հին մարդկանցից ոմանք հպարտությամբ կասեն՝ «Մենք ներկա ենք եղել «MDP -ի գիշերային համերգին»: